# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2011 թվականի **թիվ** 825 քաղ. Սանկտ Պետերբուրգ

**«Պայթյունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին**

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշեց**.

1. Ընդունել «Պայթյունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 012/2011) (կից ներկայացվում է):

2. Հաստատել՝

2.1. Ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքով ապահովվում է «Պայթյունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 012/2011) պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Պայթյունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 012/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար

անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. «Պայթյունավտանգ միջավայրերում աշխատանքի համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի փետրվարի 15-ից.

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք), նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մտնելու օրը վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, սակայն 2015 թվականի մարտի 15-ից ոչ ուշ: Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են նախքան սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավեր են՝ մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում.

3.3. նախքան 2015 թվականի մարտի 15-ը թույլատրվում է արտադրանքի արտադրություն եւ շրջանառության համար բացթողում՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության

օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են նախքան Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Այդպիսի արտադրանքի մակնշումը արտադրանքի շրջանառության միասնական նշանով Մաքսային միության անդամ պետությունների շուկայում չի թույլատրվում.

3.4. սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված ծառայության ժամկետում:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծ եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում այն ներկայացնել Հանձնաժողովի՝ սահմանված կարգով հաստատմանը:

5. Ռուսական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ ստանդարտների կիրառման արդյունքների մշտադիտարկման հիման վրա ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի թարմացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ոչ պակաս, քան տարեկան մեկ

անգամ, դրանք ներկայացնել Հանձնաժողովի քարտուղարության՝ սահմանված կարգով հաստատմանը:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացման համար պատասխանատու մարմիններ, եւ տեղեկացնել Հանձնաժողովին դրա մասին.

6.2. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել դրա պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը:

**Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝**

| | | |
|---|---|---|
| **Բելառուսի Հանրապետությունից** | **Ղազախստանի Հանրապետությունից** | **Ռուսաստանի Դաշնությունից** |
| **Ս. Ռումաս** | **Ու. Շուկեեւ** | **Ի. Շուվալով** |